

ՄԻ
17

կառայ
գիւնեկ
ու անդ
ուսթեւ
գիտակցու
րի յայտարար
մանկար վրաստա

166.000
ՆՈՒՆԵՐ
ՍՏՐԱԿՏԻ Ի ԶՈՒՄԵՆՈՅ ԸՆԴՈՒՑ
ՎԻՆԻՆԻ ԿՈՐՄԻՏԵՆԵՐԵՐԵՑ



ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Ա. Գ. ԴԱՐԱՐ

ԱՐԱՄ ԱՄՍՈՅ

1794

ԲԱԶՄԱՎԷՂ
ՕՐԱԳԻՐ

[ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՍՏԱԼՍԱՐԱՆ]

Սրբազան, Բանասիր
Տեղապահ կ. Բեա
ԳԻՏԵԼԵԱՅ
ՄԻՍԻՅԱՐ

Printed
ՏՐԱԿՏԻ ԿՈՐՄԻՏԵՆԵՐԵՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐՄԻՏԵՆԵՐԵՐԵՑ
ՍՏՐԱԿՏԻ ԿՈՐՄԻՏԵՆԵՐԵՑ
ՍՏՐԱԿՏԻ ԿՈՐՄԻՏԵՆԵՐԵՐԵՑ
ՍՏՐԱԿՏԻ ԿՈՐՄԻՏԵՆԵՐԵՐԵՑ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Մամուլի պատմության և տեսության ամբիոն

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(18-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ)

ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 070(091)
ԳՄԴ 76.02
Հ 242

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիրխորհուրդը*

Կազմեցին՝

Ա. Ա. Խառատյան
Ն. Ն. Մարտիրոսյան
Դ. Վ. Պետրոսյան

Հ 242 Հայ մանուկի պատմություն (18-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ):
Ծրագիր/ԵՊՀ: Կազմ.՝ Ա. Ա. Խառատյան, Ն. Ն. Մարտիրոսյան,
Դ. Վ. Պետրոսյան/-Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 32 էջ:

ՀՏԴ 070(091)
ԳՄԴ 76.02

ISBN 978-5-8084-2054-0

© ԵՊՀ հրատ., 2016
© Կազմողի համար, 2016

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 18-րդ դարավերջից 20-րդ դարասկզբ հայ մամուլի գործունեության հիմնական ուղղություններին, զարգացման ընթացքին, հասարակական կյանքում նրա ունեցած դերի և ազդեցության շրջանակներին:

Դասընթացը կօգնի ուսանողներին յուրացնելու ներկայացվող ծրագրի հետևյալ հիմնական դրույթները՝

- Ազգային հիմնախնդիրների առաջադրման և լուծման ուղիների ուսումնասիրություն,
- Արևելահայ և արևմտահայ պարբերականների քաղաքական, հասարակական դիրքորոշումների հիմնական կողմերի վերհանում,
- Գրական-մշակութային կյանքին, զարգացման գործընթացներին մամուլի անմիջական մասնակցության և դերի համակողմանի քննություն,
- Խմբագիրների, հրատարակիչների, աշխատակիցների, հայտնի հրապարակախոսների կյանքի և գործունեության լուսաբանում,
- Թեմատիկ ուղղվածության պարբերականների ընդգրկման ոլորտների առանձնացում,
- Հայ մամուլի տիպաբանական հատկանիշների բացահայտում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՋՈՂ ԱՎԱՐՏԻՆ ՈՒՍԱՆՈՂԸ.

1. Կժանոթանա 18-րդ դարավերջի-20-րդ դարասկզբի հայ մամուլի զարգացման հիմնական ուղղություններին,
2. Կզնահատի ժամանակաշրջանի հասարակական, քաղաքական, մշակութային կյանքի տարբեր ոլորտներում մամուլի ակտիվ դերակատարությունն ու խոշոր ներդրումը,
3. Կկարևորի պարբերականների տեղն ու դերը հայ մամուլի պատմության մեջ,
4. Տեղյակ կլինի մամուլի էջերում իրենց գործունեությամբ մեծ հեղինակություն ձեռքբերած խմբագիրների, հրապարակախոսների ստեղծագործական ժառանգությանը,
5. Կարժևորի մամուլում նոր ավանդույթների ստեղծման, թեմատիկ ուղղվածության, տիպաբանության ուշագրավ դրսևորումների հիմնական կողմերը:

ԹԵՄԱ I
ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հայ տպագրության սկզբնավորումը Վենետիկում, 1512 թ.: Հակոբ Մեղապարտը և նրա տպագրած գրքերը: Նշանավոր տպագրիչներ Արգար Թոքատեցու, Սուլթանշահ Թոքատեցու, Հովհաննես Տերզնցու, Խաչատուր Կեսարացու, Հովհաննես Զուղայեցու, Ոսկան Երևանցու և այլոց գործունեությունը:

Հայկական տպագրությունը XVI-XVII դդ.

Հայկական տպագրությունը Կ. Պոլսում, Հռոմում, Ամստերդամում, Լիվոռնոյում, Մարսելում և այլուր: Տպագրությունը XVIII-XIX դդ. Զմյուռնիայում, Կ. Պոլսում, Էջմիածնում, Ս. Պետերբուրգում, Աստրախանում, Մոսկվայում, Նոր Նախիջևանում և այլուր:

ԹԵՄԱ II
ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՍԿՁԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Հնդկաստանի հայ գաղթօջախները՝ հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման հանգրվան

Հովսեփ Էմին. Մադրասի խմբակը 1770-ական թթ.: Շ. Շահամիրյան, Մ. Բադրամյան, Հ. Շահամիրյան: Հայաստանի ազատության և անկախ պետականության գաղափարաբանությունը: «Որոգայթ փառաց» և «Նոր տետրակ որ կոչի յորդորակ»:

Հայ մամուլի սկզբնավորումը Հնդկաստանում

Հայ լրագրության առաջնեկ «Ազդարար» ամսագիրը (Մադրաս, 1794-1796) և նրա խմբագիր Հարություն քահ. Շմավոնյանը: Անգլիական մշակույթը, նաև՝ լրագրական մշակույթը Հնդկաստանում: «Ազդարարի» ուղղությունը և հասարակական-քաղաքական արժեքը: Հրապարակախոսությունը, պատմական ու գեղարվեստական նյութերը:

**Հնդկահայ մամուլի հետագա պատմությունը
(1820-1860-ական թթ.)**

«Շտեմարան», «Բանասեր», «Ուսումնասեր» և «Եղբայրասեր» պարբերականները: Հնդկահայ համայնքների իրականությունը դրանց էջերում, ուղղությունները և ազգապահպան նշանակությունը:

Մ. Թաղիադյանի խմբագրական գործունեությունը

«Ազգասեր» (Կալկաթա, 1845-1848) և «Ազգասեր Արարատյան» (Կալկաթա, 1848-1851) պարբերականները: Ազգային լուսավորության խնդիրները: Լրագրային ժանրերի զարգացումն այդ հրատարակություններում:

ԹԵՄԱ III

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Ընդհանուր ակնարկ Մխիթարյան միաբանության պատմության

Մխիթար Սեբաստացին և նրա միաբանության տեղը հայ մշակույթի պատմության մեջ: Վենետիկի և Վիեննայի միաբանությունների հայազիտական հրատարակությունները:

Մխիթարյանների լրագրական գործունեությունը

Մխիթարյանների վաղ շրջանի պարբերականները «Տարեգրություն»-ից (խմբ.՝ Ղ. Ինճիճյան, Վենետիկ, 1799-1802) հետո: «Եղանակ Բյուզանդյան» (խմբ.՝ Ղ. Ինճիճյան, Վենետիկ, 1803-1820) և «Դիտակ Բյուզանդյան» (խմբ.՝ Գ. Գապարաճյան Վենետիկ, 1812-1816) պարբերականները:

ԹԵՄԱ IV

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ – ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Կրթական-մշակութային կյանքի վերելքը

Մոսկվայի Լազարյան ճեմարանը (1815), Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը (1824), Վենետիկի Ռաֆայելյան վարժարանը (1791): Երևանի, Շուշիի դպրոցները 1830-1850-ական թթ.: Թաղային վարժարանները Կ. Պոլսում (1791), Կոմ Կափուլի մայր վարժարանը (1828), Բերայի օրիորդաց վարժարանը (1826), Պեզճյան վարժարանը (1832) և Սկյուտարի ճեմարանը (1838): Չմյուռնիայի Ս. Մեսրոպյան (1799) և Ս. Սարգսյան (1821, 1845-ից՝ Ս. Հռիփսիմյան) վարժարանները: Դրանց կրթական ծրագրերը և ուղղվածությունը:

Պարբերական մամուլի սկզբնավորումը արևելահայ և արևմտահայ հասվածներում

Աստրախանի «Արևելյան ծանուցմունք» (խմբ.՝ Կ. Շահվերդյան, 1816) շաբաթաթերթը: Աստրախանի հայ գաղթօջախը XVIII-XIX դդ., շաբաթաթերթն իբրև ռուսական համանուն պաշտոնաթերթի հայերեն տարբերակ: Շաբաթաթերթի տեղը հայ մամուլի պատմության մեջ:

«Կովկաս» (խմբ.՝ Հ. Արզանյան, Հ. Կարենյան, 1846-1848) և «Արարատ» (խմբ.՝ Գ. Պատկանյան, 1850-1851) թերթերը Թիֆլիսում: Դրանց կրոնաբարոյական նյութերը և պահպանողական ուղղվածությունը: Կրթական հարցեր: Գեղարվեստական գործերը, հեղինակներ:

Կ. Պոլսի «Լրո գիր» թերթը (1832-1850)՝ իբրև օսմանյան պաշտոնաթերթի հայկական տարբերակ և դրա ինքնուրույն նյութերը: Խմբագիրները և պահպանողական ուղղությունը:

«Ազդարար Բյուզանդյան» (1840) և «Հայաստան» (1846-1852) թերթերը Կ. Պոլսում: «Արշալույս Արարատյան» (1840-1885) և «Հայրենասեր» (1843-1846) թերթերը Չմյուռնիայում: Խմբագիրները, տպագրած նյութերի ազգային բովանդակությունը և ուղղությունը:

Գաղթօջախների մամուլը

Մխիթարյանների «Բազմավեպ» (Վենետիկ, 1843-ցօրս) և «Եվրոպա» (Վիեննա, 1847-1863) պարբերականները: «Բազմավեպը» Գ. Այվազովսկու և Ղ. Ալիշանի խմբագրության տարիներին: Առաջավոր հասարակական շարժումների արձագանքն այդ հանդեսում: Եվրոպական և օսմանյան քաղաքական իրադարձությունները «Եվրոպայում»: Ա. Մուրադյանի «Հայրենասեր» թերթը (Նիկոմեդիա, 1851-1852):

ԹԵՄԱ V

ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ (1850-1860 -ԱԿԱՆ ԹԹ.)

Արևմտահայ մամուլը 1850-1860-ական թթ.

Ինքնուրույն և թարգմանական գրականությունը մամուլում

«Բանասեր» հանդեսը (Կ. Պոլիս, 1851-1852) և նրա խմբագիր Հ. Հիսարյանի գրական ու քաղաքական հայացքները: Գեղարվեստական գրականությունը «Բանասերի» էջերում:

«Արվի Արարատյան» (Չմյուռնիա, 1853-56) հանդեսը: Խմբագիրներ Հ. և Կ. Տետեյան եղբայրների թարգմանական և հրատարակչական գործունեությունը: Թարգմանական գրականությունը հանդեսի հավելվածներում: Տետեյանների «Դիմակ» երգիծական հանդեսը (Չմյուռնիա, 1862-63): «Գրական Հայաստանի» և «Հավերժահարս» (Չմյուռնիա, 1862) պարբերականների գրական - մշակութային ուղղվածությունը:

Գիտամշակութային հրատարակություններ

Գ. Կոստանդյանի «Թանգարան հասարակաց» (Չմյուռնիա, 1858) պարբերականի թողարկումները՝ ուղղված գիտության ժողովրդականացմանը: Գ. Կոստանդյանը՝ XIX դ. II կեսի հայ փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչ:

Ա. Հայկունու (Ա. Ճիգանճյան) «Մուսայք Մասյաց» թատերական շաբաթաթերթը (Կ. Պոլիս, 1857-1858): «Քնար Արևելյան» երաժշտական

ամասերբը (Կ. Պոլիս, 1857, 1859-1863): Մ. Ությունյանի «Կիլիկիա» առողջապահական հանդեսը (Կ. Պոլիս, 1861-1875):

«Մասիս» լրագիրը (Կ. Պոլիս, 1852-1908): Կ. Ությունյանի խմբագրական գործունեությունը: Կ. Պոլսի հայության հանրային խնդիրները: «Մասիսը» և Կ. Պոլսի ազգային պատրիարքարանը: Արևմտահայերի Ազգային սահմանադրության պաշտպանությունը և վերաբերմունքը օսմանյան լիբերալ շարժման նկատմամբ: Գեղարվեստական գրականության, դպրոցի և մանկավարժության հիմնահարցեր:

Մ. Խրիմյանի «Արծվի Վասպուրական» շաբաթաթերթը (Կ. Պոլիս, 1855-1856, Վարագ (Վան), 1858-1864): Արևմտահայաստանի կացության արտացոլումը և նրա հայ բնակչության շահերի պաշտպանությունը: Ազգային սահմանադրությունը Արևմտահայաստանում կիրառելու ուղեգծի առաջադրումը: Գեղարվեստական գործերը:

«Լրատար արծվիկ Տարոնո» (Մուշ, 1863-1865) պարբերականը և Գ. Սրվանձտյանցի խմբագրական գործունեությունը:

ԹԵՄԱ VI

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԲՁ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ

Հ. Սվանյանի «Մեղու» հանդեսը (Կ. Պոլիս, 1856-1865, 1870-1872):
Հ. Սվանյանի առաջադիմական հրապարակախոսության բնութագիրը և պայքարը արևմտահայերի ազգային վարչությունը սահմանադրելու ասպարեզում: Ընդդեմ ժողովրդի իրավագուրկ կացության: Երգիծանքի առանձնահատկությունները. Մեչուխեչա: Համագործակցությունը Մ. Նալբանդյանի հետ: Գրականությունը «Մեղու»-ում: Հ. Պարոնյանը՝ «Մեղու»-ի խմբագիր:

Սահմանադրական պարբերականները Չմյուռնիայում. «Միություն» և «Միություն սահմանադրական» հանդեսները (1860, 1862): Աշխատակիցները:

Գր. Չիլինկիլյանի խմբագրած (մինչև 1862 թ.՝ Ա. Հայկունու հետ) «Ծաղիկ» հանդեսը (Չմյուռնիա, 1861-1867): Սահմանադրության և

ասհմանադրական կարգերի տեսական հիմնավորումները և գորակցությունը Հ. Սվաճյանի «Մեղվին»: Բանավեճ սոցիալիստների հետ՝ հոգուտ մասնավոր սեփականության: 1862 թ. Չեյքունի ինքնապաշտպանությունը և Ա. Հայկունու բանաստեղծությունները: Թարգմանական գրականությունը:

Պահպանողական մամուլ

Հակասահմանադրական պարբերականները. Հ. Չամուռճյանի «Երևակ» հանդեսը (Կ. Պոլիս, 1857-1866): Ամիրայության շահերի պաշտպանությունը և պայքարը սահմանադրական մամուլի դեմ: Հայ Առաքելական եկեղեցու և կաթոլիկական եկեղեցու վերաբերյալ պատկերացումները: Արևմտյան Եվրոպայի քաղաքական շարժումների գնահատականը: Մ. Տեյիրմենճյանի «Արևելյան դար» կիսամյա հանդեսը (Կ. Պոլիս, 1860-1863): Պահպանողական հայացքները ընդդեմ Ազգային սահմանադրության:

ԹԵՄԱ VII

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ 1850-1860-ԱԿԱՆ ԹԹ.

Ազգային լուսավորության և կրթության հիմնահարցերը

Ազգային լուսավորության նոր, ազատամիտ և պահպանողական ըմբռումները հասարակական մտքի անդաստանում: Նոր գրական լեզվի և գրականության զարգացման խնդիրները: Եկեղեցու տեղն ազգային իրականության մեջ: Գրապայքարի բովանդակությունը: Պահպանողական և ազատամիտ ուղղությունների բնութագիրը:

Պահպանողական մամուլ

«Մեղու Հայաստանի» լրագիրը (Թիֆլիս, 1858-1884), դիրքորոշումները եկեղեցու, լեզվի և ավանդույթների գնահատման ասպարեզում: Խմբագիրը (Պ. Սիմեոնյանց) և աշխատակիցները, նրանց միավորող հայացքները: Գեղարվեստական գրականություն:

«Ճռաքաղ» հանդեսը (Մոսկվա, 1858-1862): Մ. և Ջ. Մսերյանների պահպանողական հայացքներն ընդդեմ Ստ. Նազարյանի «Հյուսիսափայլի»: Բաժինները, հրապարակումները և լեզվական ու մատենագրական նախասիրությունները: Մ. և Ջ. Մսերյանների «Համբավաբեր Ռուսիո» լրագիրը (Մոսկվա, 1861-1864)՝ արևելահայ պահպանողականների ամբիոն և լրատվամիջոց: Արևմտահայերի ազգային սահմանադրության գնահատականն այդ լրագրում՝ Էջմիածնի կաթողիկոսության հայեցակետից:

«Կռունկ հայոց աշխարհի» ամսագիրը և Մ. Աղաբեկյանի պահպանողական հայացքները: «Կռունկի» լուսավորական ծրագիրը և ընդդիմությունը Այսրկովկասում Ռուսաստանի գաղութային քաղաքականությանը: Արևմտահայ իրականությունը և Ջեյթոնի 1862 թ. ինքնապաշտպանության անդրադարձը: Նյութերն ու հեղինակները: Ամսագրի գեղարվեստական գրականությունը:

Ազատամիտ մամուլ

«Հյուսիսափայլ» ամսագիրը (Մոսկվա, 1858-1862, 1864): Ստ. Նազարյանը՝ «Հյուսիսափայլի» խմբագիր: Մ. Նալբանդյանի համագործակցությունը: Նազարյանի ազգային լուսավորության ծրագիրը և դրա իրականացման ուղիները: Աշխարհաբարը՝ նոր գրականության լեզու, և «Հյուսիսափայլը» գրապայքարի հորձանուտում: Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի հրապարակախոսությունը: Ընդդեմ պահպանողականության: Աշխատակիցները: Գեղարվեստական գրականությունը:

ԹԵՄԱ VIII

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (1850-60-ԱԿԱՆ ԹԹ.)

Հայ մամուլը Ֆրանսիայում

Ստ. Ոսկանի «Արևելք» (Փարիզ, 1855-1856) և «Արևմուտք» (Փարիզ, 1859, 1864-1865) հանդեսները: Եվրոպական մշակութային արժեք-

ների յուրացման խնդիրը: Ընդդեմ կաթոլիկական քարոզչության և հայ պահպանողականության: Ազատասիրական գաղափարները:

Գ. Այվազովսկու «Մայայց աղավնի» ամսագիրը (Փարիզ, 1855-1858): Հասարակական հայացքները: Արևմտահայ գրական աշխարհաբարի զարգացումը հանդեսում: Բանավեճ «Արևմուտքի» հետ: Դպրոցի և մանկավարժության հարցեր:

Ա. Մուրադյանի «Փարիզ» լրագիրը (Փարիզ, 1860-1863) և արևմտահայ կյանքի լուսաբանումները: Ազատագրական պայքարի գաղափարները և 1862 թ. Չեյթունի իրադարձությունների լուսաբանումը:

Մամուլն Ավստրիայում և Անգլիայում

Մխիթարյանների «Եվրոպա» պարբերականը (Վիեննա, շաբաթաթերթ՝ 1847-1858, երկշաբաթաթերթ՝ 1858-1863): Եվրոպական երկրների քաղաքական իրադարձությունների լուսաբանումը: Օսմանյան Թուրքիայի բարենորոգումների խնդիրը և Եվրոպան:

Կ. Վարդ Շահնագարյանի «Երկրագունդ» լրագիրը (Մանչեստր, 1863-1864): Ազգի լուսավորության և տնտեսական խնդիրների զուգորդումը, Արևմտյան Հայաստանի իրավագրկության բացահայտումները: Առաջադիմական այլ դիրքորոշումներ:

ԹԵՄԱ IX

ԿՐՈՆԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Հայ Առաքելական եկեղեցին մամուլում

Հ. Չամուռճյանի «Երևակը» (Կ. Պոլիս, 1856-1866) և հայ եկեղեցու դավանական խնդիրները: Վերաբերմունքը կաթոլիկական եկեղեցու նկատմամբ և դավանական լայնախոհությունը: Նիկոմեդիայի «Լույսը» (Արմաշ, 1864-1878), Երուսաղեմի «Սիոնը» (Երուսաղեմ, 1866-1877) և վերջինիս կրոնական ու բանասիրական ուղղվածությունը: «Արարատ» ամսագիրը (1868-1918)՝ Էջմիածնի պաշտոնական և հայագիտական հրատարակություն: Ազգային իրավունքների, դպրոցի ու մշակույթի

պաշտպանությունը ազգային կրոնական հրատարակություններում: Դրանց պատմաբանասիրական արժեքը:

Բողոքական դավանանքի հրատարակություններ

Ամերիկյան բողոքականների հրատարակությունները՝ «Շտեմարան պիտանի գիտելյաց» (Չմուռնիա, 1839-1854), «Ավետաբեր» (Կ. Պոլիս, 1855-1915), «Ավետաբեր մանկանց» (Կ. Պոլիս, 1908-1915) և այլ պարբերականներ: Դրանց դավանական ուղղվածությունը և ոչ ազգային բովանդակությունը կրթության և դաստիարակության ասպարեզում:

ԹԵՄԱ X

ՄԱՄՈՒԼԸ XIX Գ. ՎԵՐՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՅԱԿԻՆ ԲՆԱՇԽԱՐՀԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԳՎՅՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Արևելահայ ազատամիտ և պահպանողական մամուլ (1870-ական թթ.)

Ազատական հոսանքը արևելահայ իրականության մեջ: Գր. Արծրունին և «Մշակ» լրագիրը (Թիֆլիս, 1872-1921): «Մշակը»՝ նոր լրագրության մունետիկ: Ազգի հոգևոր ու տնտեսական զարգացման խաչմերուկներում: Կովկասի և Արևմտյան Հայաստանի իրական պատկերի արտացոլումը: Բաֆֆին և Լեոն՝ «Մշակի» աշխատակիցներ: Ազգային ինքնորոշման խնդիրը 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի շրջանում և Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը: Անցումը տնտեսական շինարարության մտայնությանը և գործնական կապերը արևմտահայ մտավորականության հետ:

Պահպանողական հոսանքը արևելահայ կյանքում: Ա. Հովհաննիսյանի «Փորձ» ամսագիրը (Թիֆլիս, 1876-1881)՝ պահպանողական նոր սերնդի հրատարակություն: Ընդհանրություններն ու հակասությունները «Մեղու Հայաստանի» լրագրի հետ: Արևմտահայերի ինքնորոշման վերաբերյալ չափավոր պատկերացումները «Փորձի» էջերում: Այսրկով-

կասի տնտեսական իրողությունները և հեռանկարները: Գեղարվեստական գրականությունն ու արվեստը: Հայագիտական գործերը «Փորձում»:

Պահպանողական այլ հրատարակություններ

2. Մսերյանի «Փարոս» (Մոսկվա, 1872-1876) և «Փարոս Հայաստանի» (Մոսկվա, 1879-1881) պարբերականները: Ազգային դաստիարակության և կրթության բնագավառում պահպանողականների առաջադիմական պատկերացումները «Դաստիարակ» (Թեոդոսիա, 1873-1874), «Դպրոց» (Վաղարշապատ, 1874-1876) և «Մանկավարժական թերթ» (Թիֆլիս, 1878-1879) պարբերականներում: Կրոնն ու եկեղեցին ազգային լուսավորության մեջ:

ԹԵՄԱ XI

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԱՏԱՄԻՏ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Ազատական մամուլ. Հ. Պարոնյանի պարբերականները

Ազատական ուղղությունը Հ. Պարոնյանի երգիծական պարբերականներում: «Մեղուն» Հ. Պարոնյանի խմբագրության տարիներին (1872-1874): Դեմոկրատական սկզբունքների շարունակությունն ու զարգացումը: Արևմտյան Հայաստանում օսմանյան տիրապետության երգիծական անդրադարձները:

«Թատրոն» (Կ.Պոլիս, 1874-1877): Պարոնյանի երգիծական հրապարակախոսությունը «Թատրոնում»: Քաղաքական երգիծանքը. Օսմանյան պաշտոնետրոջան և քրդական աշիրեթների հարստահարություններն Արևմտյան Հայաստանում: Բարենորոգումների երգիծական մեկնաբանությունները: Օսմանյան բարենորոգչական շարժման և օսմանյան սահմանադրության (1876 թ.) երգիծական բնութագրերը: Թուրքիայում ռուսական և եվրոպական քաղաքականության քննադատությունը:

Պարոնյանի քաղաքական երգիծանքը «Լույս»-ում (Կ. Պոլիս, 1879): «Ծիծաղ» պարբերականը (Կ. Պոլիս, 1883): Այլաբանական երգիծանքը. Հ. Պարոնյանը՝ ռեալիզմի հետևորդ և նրա գրականագիտական հայացքները «Ծիծաղում»:

Պարոնյանի «Խիկար» ամսագիրը (Կ. Պոլիս-Ադրիանուպոլիս – Կ. Պոլիս, 1884-1888): Անկյալ բարբերի և բարոյականության քննադատությունը: Կենցաղային երգիծանքը, «Քաղաքավարության վնասները»: Դպրոցի և լուսավորության հիմնահարցեր: Գրաքննադատությունը «Խիկարում»:

Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլ» հանդեսը (Զմյուռնիա, 1871-1901): Ազգային իրավունքների պաշտպանությունը: Ազգային սահմանադրության քննադատությունը: Դպրոցի և մանկավարժության խնդիրները: Պահպանողական հայացքներ: Հայկական հարցի գնահատականը: Բարոյականության և էթիկայի հիմնահարցը: Գեղարվեստական գրականությունը և գրաքննադատությունը:

Արևմտահայ այլ հրատարակություններ

«Ասիա» լրագիրը (Կ. Պոլիս, 1872-1874): Առաջադիմական ուղղությունը. «Ասիան» Մ. Փորթուգալյանի խմբագրության շրջանում: Հ. Պարոնյանի քննադատական հոդվածաշարը «Ասիայում»: Մ. Այվատյանի «Արարատ» դեմոկրատական լրագիրը (Կ. Պոլիս, 1870-1876) և գավառական հարստահարությունների ցուցադրումը: Օ. Խոճասարյանի «Օրագիր» («Նոր Դար», «Նորագիր») լրագիրը (Կ. Պոլիս, 1869-1879):

ԹԵՄԱ XII

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՊԸՀՊԱՆՈՎԱԿԱՆ ԵՎ ԱԶԱՏԱՄԻՏ ՄԱՄՈՒԼ (1880-1890-ական թթ.)

Ա. Հովհաննիսյանի «Արձագանք» շաբաթաթերթը (Թիֆլիս, 1882-1898): Արևելահայ իրականության արտացոլումը: Հայագիտությունը «Արձագանքում»: Գեղարվեստական գրականությունը և գրաքննադատ-

տություներ: Բանավեճերը: Արևմտահայության կյանքի լուսաբանումները: Հայագիտական նյութեր:

Ս. Սպանդարյանի «Նոր-դար» (Թիֆլիս, 1883-1906) լրագիրը: Պահպանողական հայացքները: Հակադրություները «Մշակի» հետ: Այսպիսով տնտեսական զարգացման հարցերը: Արևմտահայության դրության արտացոլումը: Հայագիտական նյութերը:

«Մուրճ» ամսագիրը (խմբ.՝ Ավ. Արասխանյան, Թիֆլիս, 1889-1900): Ազատական ուղղություները: Մոցիալական հիմնահարցերը և տնտեսական զարգացման հարցադրումները: Գյուղը «Մուրճի» էջերում: Գյուղագրական գրականությունը: Հայերի կոտորածներն Օսմանյան Թուրքիայում և «Մուրճը»: Գրաքննադատական նյութեր, գեղարվեստական գրականությունը և արվեստը: Հայ մտավորականության խնդիրները:

ԹԵՄԱ XIII

ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1880-1890-ԱԿԱՆ ԹԹ.)

«Աղբյուր» մանկական ամսագիրը (խմբ.՝ Տ. Նազարյան, Թիֆլիս, 1883-1918): Մանկապատանեկան գրականությունը: Մանկավարժական – բարոյական բնույթի նյութեր: Ինքնուրույն և թարգմանական գրականություն. «Աղբյուրի» հավելվածները: Ամսագրի դերը ազգային մանկագրության զարգացման գործում:

«Արաքս» հանդեսը (խմբ.՝ Ս. Գուլամիրյանց, Պետերբուրգ, 1887-1898): Գրական-գեղարվեստական բնույթի գործերը: Գեղագիտական, պատմական ու հասարակագիտական հրապարակումներ: Արվեստագիտական նյութերը: Թարգմանական գրականությունը:

«Հանդես գրականական և պատմական» (խմբ.՝ Մ. Բարխուդարյան Մոսկվա, 1888-1890, 1894-1896): Ազգային և թարգմանական գրականությունը հանդեսում: Պատմաբանասիրական բնույթի հրապարակումները: 1860-ական թթ. հայ գործիչները և գրողները հանդեսի էջերում: Մշակույթի և արվեստի հիմնահարցերը:

Տ. Նազարյանի «Տարագ» շաբաթաթերթը (Թիֆլիս-1890-1919): Հայ գրականությունն ու գրաքննադատությունը «Տարագում»: Հայկական հարցը շաբաթաթերթի հրապարակախոսության մեջ: Ազատամիտ ուղությունը: «Տարագի» մշակութային, առողջապահիկ և այլ բնույթի հավելվածները:

ԹԵՄԱ XIV

ԱՐԵՎՏՏԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ (1880-1890-ԱԿԱՆ ԹԹ.)

Ազգագրական և գրական – իմաստասիրական բնույթի հրատարակություններ. Ստ. Յուրյուճյանի «Բյուրակն» հանդեսը (Կ. Պոլիս, 1882-1908): Արևմտահայաստանը «Բյուրակնի» 11 էջերում: Ազգագրական բնույթի հրապարակումներ: Գրական և հասարակական նյութերը:

Ե. Տեմիրճիպաշյանի «Գրական և իմաստասիրական շարժում» հանդեսը (Կ. Պոլիս, 1883-1885): Իմաստասիրական և գրական նյութերը: «Երկրագունտ» (խմբ. Ե. Տեմիրճիպաշյան, Կ. Պոլիս, 1883-1888): Գրական և գեղագիտական հրապարակումները: Հայ և օտար գրականությունը «Երկրագունտի» էջերում: Ե. Տեմիրճիպաշյանի աշխատակցությունը:

Գրական և հասարակական բնույթի պարբերականներ

Բ. Քեչյանի «Արևելք» օրաթերթը (Կ. Պոլիս, 1884-1912): Թերթի վարչությունը: Գրական ու գեղագիտական նոր ուղղությունը «Արևելքում»: Ա. Արվիարյանի, Լ. Բաշալյանի, Տ. Կամսարականի և այլոց աշխատակցությունը: Արևմտահայաստանի թեման: Արևելահայ իրականության անդրադարձը:

«Ճաղիկ» կիսամյա հանդեսը (խմբ. Հ. Հաճյան, Կ. Պոլիս, 1886-1911): Գրական և գրականագիտական նյութերը: Հայ, ռուս և եվրոպական գրականությունը: Դպրոցի և մանկավարժական խնդիրներ: Աշխատակիցները:

«Հայրենիք» օրաթերթը (խմբ. Մ. Գափամաճյան, Կ. Պոլիս, 1870-1896, 1909-1910): Առաջադիմական ուղղությունը, քննադատական կեց-

վածքն ազգային իրականության խնդիրների նկատմամբ: Գեղարվեստական գրականությունը: Արևմտահայաստանը և նրա կացության բարվոքման խնդիրները: Առնչություններն արևելահայ կյանքի և մշակույթի հետ «Հայրենիքը» և համիոյան գրաքննությունը:

ԹԵՄԱ XV

ՄԱՄՈՒԼԸ ԲՆԱՇԽԱՐՀՈՒՄ (1880-1900)

Պարբերականները Արևելյան Հայաստանում

Լ. Տիգրանյանի «Առողջապահական թերթ» ամսօրյա հանդեսը (Երևան, 1881-1884): Ժողովրդական առողջապահության հարցեր և ասասագրի ուղղությունն ու ծրագիրը: Տեղական իրականությունը հանդեսի էջերում, բժշկագիտական հրապարակումներ:

Ե. Լալայանի «Ազգագրական» հանդեսի հրատարակությունը Շուշիում (Շուշի, 1896, Թիֆլիս, 1896-1916): Հայոց Ազգագրական ընկերությունը և հանդեսի ուղղությունը: Ազգային բանահյուսության և բարբառների ուսումնասիրությունը, ժողովրդական ստեղծագործությունը դրա էջերում:

Վ. Պապաջանյանի «Պսակ» թերթը (Երևան, 1880-1884): «Հայասեր- ազգասեր» գաղտնի ընկերությունը և «Պսակը»: Թերթի ուղղությունը և հրապարակումները ազատագրական և սոցիալական թեմաներով:

«Երևանի հայտարարություններ» թերթը (Երևան, 1883-1885):

Առաջադիմական ուղղությունը: Թերթի խմբագիր Է. Տեր-Գրիգորյանը և հասարակական կյանքի խոցելի վերհանումները:

Պարբերականները Արևմտյան Հայաստանում

Արևմտահայաստանի կացությունը և մտավոր կյանքը 19-րդ դ. Վերջին քառորդին: Հայ մամուլն արևմտյան Հայաստանում: «Արուսյակ», «Չեփյուռ» (1889) և «Մենտոր» (1886), պարբերականները Մարզվանում: Խարբերդի «Դատ» պարբերականը (1896): Դրանց ուղղվածությունը և բովանդակությունը:

ԹԵՄԱ XVI ԿՐՈՆԱԿԱՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Հայ առաքելական եկեղեցու հրատարակություններ

«Եկեղեցի Հայաստանյայց» կրոնական և աստվածաբանական հանդեսը (Կ. Պոլիս, 1887-1889): Նյութերը և բովանդակությունը: Ազգային-եկեղացական ավանդույթները, պատմությունը, ծեսերն ու արարողությունը հանդեսում:

«Խոսնակ Հայաստանյայց եկեղեցվո» շաբաթական հանդեսը՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի հրատարակություն (խմբ. Վ. Տ., Կ. Պոլիս, 1888):

Բ. Վարդ. Կյուլեսերյանի «Լույս» կրոնական և բանասիրական շաբաթաթերթը (Կ. Պոլիս, 1895-1900): Կ. Պոլսի և Արևմտահայաստանի ազգային – եկեղեցական կյանքը «Լույս»-ում:

Այլ դավանանքների հրատարակություններ

Բողոքական քարոզչությունը ամերիկյան միսիոներների «Ավետաբեր» շաբաթաթերթում (Կ. Պոլիս, 1890-ական թթ.): Միսիոներների գործունեության լուսաբանումները այդ պարբերականում: «Ավետաբեր տղայոց համար» մանկապատանեկան հրատարակությունը (Կ. Պոլիս, 1880-1890-ական թթ.) և դրա բովանդակությունը:

Կաթոլիկական «Պատկեր» կիսամսյա հանդեսը (Կ. Պոլիս, 1890-1900): Հայ կաթոլիկական համայնքը Կ. Պոլսում: Առնչությունները Հայ առաքելական եկեղեցու հետ: Կաթոլիկական քարոզչությունը այդ հրատարակության էջերում:

ԹԵՄԱ XVII ՀԱՅԱՏԱՌ-ԹՈՒՐԲԵՐԵՆ ՄԱՄՈՒԼ

Կաթոլիկ հայ համայնքն Օսմանյան Թուրքիայում

Հայ կաթոլիկները և նրանց փոխհարաբերությունները հայ Առաքելական եկեղեցու, Օսմանյան պետության և Եվրոպայի հետ՝ XVI-XVIII

դդ. և XIX դ. I քառորդին: Հայ կաթոլիկ համայնքի ճանաչումը Օսմանյան պետության կողմից (1832): Թուրքախոս հայ հատվածները՝ նաև դավանական օտարման հետևանք: Թուրքախոս հայ հատվածների ստեղծած արվեստն ու գրականությունը:

Հայատառ թուրքերեն մամուլ

«Ճերիտեի հավաղիս» («Նորությունների բանբեր», Կ. Պոլիս, 1840-1855) թերթը և Խ. Օսկանյանի հրապարակախոսությունը: «Մեճմուայ հավաղիս» թերթը (Կ. Պոլիս, 1852-1886) թերթը և Հ. Վարդանյանի (Հովսեփ Վարդան փաշա) խմբագրական-հրատարակչական գործունեությունը:

Կ. Փանոսյանի թերթերը և այլ պարբերականներ

1860-1880-ական թթ.

«Մյունատիի էրճիաս» («Արգեստի մունետիկ», Կ. Պոլիս, 1859-1862) և «Մանգումեի էֆքյար» («Կարծիքների շարք», Կ. Պոլիս, 1866-1913) թերթերը: «Թերճեմանը էֆքյար» («Կարծիքների թարգման», Կ. Պոլիս, 1877-1884) թերթերը, դրա ազգային - հասարակական նյութերը: «Ճերիտեի շարգիյե» («Արևելյան լուրեր» Կ. Պոլիս, 1885-1913) թերթերը, նյութերը, ուղղությունը:

ԹԵՄԱ XVIII

ԱԶԳԱՅԻՆ – ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 19-ԲԳ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ ՀԱՅ ՔԱԳԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԸ

Ազգային կուսակցությունների առաջացման նախադրյալները, ազգային ազատագրության գաղափարները հայ իրականության մեջ 1880-ական թթ.: Արմենականները՝ ազգային առաջին քաղաքական կուսակցություն (1885); Հնչակյան կուսակցություն (1887), ազգային և սոցիալիստական ուղղվածությունը: Հայ Հեղափոխական Դաշնակցություն (1890): Կուսակցությունների գաղափարախոսությունը և հիմնադիր գործիչները:

«Հնչակը» Հնչակյան սոցիալ-դեմոկրատ կազմակերպության պաշտոնաթերթ (1887-1900, Մոնպելիե, Փարիզ, Աթենք, Լոնդոն): Արևմտյան Հայաստանի ազատության գաղափարի քարոզչությունը, վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ: Սոցիալիստական հեղափոխության հիմնահարցը: Բանավեճերը Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության հետ:

«Դրոշակը» (1891-1914, Ժնև, 1925-1934, Փարիզ) Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության պաշտոնաթերթ: Հիմնադիր խմբագիրները (Քր. Սիքայեյան, Ռ. Չոբյան, Ս. Չավարյան, Ս. Վրասյան) և կուսակցական, ազգային, հայրենասիրական քարոզչությունը:

ԹԵՄԱ XIX

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 20-ՐԴ ԳԱՐԱՍԿԶՔԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՄԱՄՈՒԼԻ ԱՆԳՐԱԳԱՐՉԸ

Գաշնակցական մամուլը

Դարասկզբին Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները և Անդրկովկասը:

19-րդ դարավերջին ձևավորված քաղաքական կուսակցությունների և նրանց մամուլի գործունեության աշխուժացում:

Արևմտյան Հայաստանի ազատագրության ծրագրի հետ մեկտեղ նոր պահանջների առաջադրում՝ կապված Արևելյան Հայաստանում ազգային ինքնավարության և սահմանադրական իրավունքների ընդլայնման հետ:

Գաշնակցական մամուլի գործունեության հիմնական ուղղությունները արևելահայության մեջ: «Դրոշակի» առաջնորդողներն ու խմբագրականները արևելահայությանը հուզող խնդիրների շուրջ: Հայ-թաթարական ընդհարումների արձագանքներն ու մեկնաբանությունները «Դրոշակ»-ում (1905 – 1906 թթ.):

Գաշնակցական նոր պարբերականների ծնունդը արևելահայ իրականության մեջ 1905-1910 թթ. «Յառաջ» (1905 – 1906, Թիֆլիս),

«Գրոհ» (1906 – 1907), Բաբու, «Ժայռ» (1907, Թիֆլիս), «Վտակ» (1907 – 1908, Թիֆլիս), «Զանգակ» (1908, Թիֆլիս):

«Հորիզոն» (1909 – 1918, Թիֆլիս) դաշնակցական օրաթերթը և դրանշանակալից դերը արևելահայությանն ու արևմտահայությանը հուզող հիմնախնդիրների լուսաբանման գործում: «Հորիզոնի» խմբագիրները՝ Լեո, Հ. Թումանյան, Ն. Աղբալյան, Մ. Վարդանյան: Հ. Թումանյանի խմբագրական և հրապարակախոսական գործունեությունը: Դաշնակցության մեծ դատավարությունը և դրա արձագանքները «Հորիզոն»-ում:

ԹԵՄԱ XX

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՄՈՒԼԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հնչակյան կուսակցության մամուլի նոր օրգանները, դրանց վերաբերմունքը արևելահայ իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններին: Հնչակյանների սոցիալ-դեմոկրատական ուղղվածությունը, համագործակցություն արևելահայ սոցիալ-դեմոկրատների բոլշևիկյան թևի հետ: Հնչակյան «Ապագա» թերթի (1907, Թիֆլիս) և բոլշևիկյան մամուլի գաղափարական ընդհանրությունները:

Ռուս-սոցիալ դեմոկրատների անմիջական արձագանքները Անդրկովկասում: Նրանց բոլշևիկյան և մենշևիկյան թևերի գաղափարական հետևորդները: Բոլշևիկյան պարբերականներ՝ «Պրոլետարիատի կռիվը» (Թիֆլիս, 1903-1905), «Կայծ» (Թիֆլիս, 1906), «Նոր խոսք» (Թիֆլիս, 1906) և այլն: Ստեփան Շահումյանը՝ այս թերթերի խմբագիր:

Սպեցիֆիկների (Սոցիալ - դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն) ուրույն մոտեցումը դասակարգային պայքարին, բանվոր դասակարգի դերին ու ազգային պատկանելությանը: Հայ սպեցիֆիկների (Ե. Պալյան, Բ. Իշխանյան, Դ. Անանուն, Ալ. Ռուբենի) հրապարակախոսական ակտիվ գործունեությունը, նրանց մամուլի օրգանները՝ «Կյանք» (1906, Թիֆլիս), «Զայն» (1906 – 1907, Թիֆլիս), «Նոր կյանք» (1911 – 1912, Բաբու), «Մեր ուղին» (1912, Բաբու) և այլն:

Դարասկզբի հասարակական-քաղաքական իրադարձությունների հանդեպ ոչ կուսակցական մամուլի դիրքորոշումները: «Մշակի» խմբագիրները (Ալ. Քալանթար, Հ. Առաքելյան) և նրանց լիբերալ հայացքները արևելահայությանը հուզող նոր խնդիրների համատեքստում:

ԹԵՄԱ XXI

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԵԻՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ

Կուսակցական նոր պարբերականները արևմտահայ գաղթօջախներում: Հայ դատի, ինչպես նաև գաղութներում ազգային կյանքին բնորոշ հիմնախնդիրների լուսաբանումը դաշնակցական «Հայրենիք» (1899 – մինչև այժմ, Նյու- Յորք, ապա Բոստոն), «Ռազմիկ» (1905, Ֆիլիպե), «Ասպարեզ» (1908, Ֆրեզնո, Լոս – Անջելոս), հնչակյան «Երիտասարդ Հայաստան» (1903-մինչև այժմ, Բոստոն), «Վերածնություն» (1903-1904, Ռուշչուկ), Վերակազմյալ հնչակյանների «Չայն Հայրենյաց» (1899 – 1911, Նյու-Յորք), հայ սահմանադրական ռամկավարների «Ազգ» (1907, Բոստոն) և բազմաթիվ այլ կուսակցական պարբերականներում:

1908 թ. Օսմանյան կայսրության տապալումն ու երիտթուրքերի իշխանության հաստատումը: Համագործակցության փորձ Դաշնակցության և երիտթուրքերի միջև: 1909 թ. Ադանայի կոտորածները. Մուլթանի հայախալած քաղաքականության նոր ժառանգորդները:

ՀՅԴ պաշտոնաթերթ «Ազատամարտը» (1909 – 1921, Կ.Պոլիս)՝ արևմտահայության շահերի պաշտպան: Ազգային կյանքի տարբեր ոլորտներին առնչվող համարձակ հրապարակումներ, թուրքական խորհրդարանում հայ պատգամավորների գործունեության, արևմտահայ գավառներում բնակչությանը հուզող հիմնախնդիրների լուսաբանումը թերթում: «Ազատամարտի» խմբագիրները՝ Ռ. Չարդարյան, Հ. Սիրունի, Գ. Բարսեղյան:

Պոլսահայ ոչ կուսակցական պարբերականները 20-րդ դարասկզբին՝ «Մասիս» (1852 – 1908), «Արևելք» (1884 – 1912), »Բյուզանդիոն»

(1896 – 1918), «Ժամանակ» (1908 – մինչ օրս): Պոլսում և գավառներում հասարակական, մշակութային կյանքի անմիջական արձագանքները այս պարբերականներում:

ԹԵՄԱ XXII
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 20-ՐԴ ԳԱՐԱՍԿԶԲԻ
ՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

1910-1914 թվականները հայ հասարակական, մշակութային կյանքի զարգացման նոր շրջան: Հայ մտավորականության համախմբման հիմնական կենտրոնները՝ Թիֆլիս, Կ. Պոլիս, Բաքու, Փարիզ, Վենետիկ, Մոսկվա, Ս. Պետերբուրգ: Թեմատիկ ուղղվածությամբ հանդեսների հրատարակության աշխուժացում մշակութային մի շարք ոլորտներում՝ գրականություն, արվեստ, բանասիրական- ազգագրական հետազոտություններ, կրթական գործ և այլն: Մասնագիտացված պարբերականների թվի ավելացումը՝ դարասկզբի հայ մամուլի դիմագիծը բնորոշող կարևոր գործոն:

Հայ մշակութային կյանքի զարթոնքը 1910-ական թթ. (հատկապես 1913 – 1914 թթ.): Նոր հիմնադրված գրական, ազգագրական, երաժշտական, պատմական ընկերությունների ու միությունների գործունեության լուսաբանումը մամուլի էջերում: Մամուլի դերը հայ գրերի գյուտին և հայ տպագրությանը մվիրված հոբելյանների և դրանց նախապատրաստական աշխատանքների մասին ընթերցողների լայն շրջաններին իրազեկելու գործում:

ԹԵՄԱ XXIII
ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐԸ.
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍՏ

«Մուրճը» (1989–1907), «Լուսան» (1896– 1912) և դարասկզբի գրական գործընթացները. որոշակի զգուշավորություն մոդեռնիստական ուղղությունների հանդեպ:

Մասնագիտական հանդեսներ. Ն. Ադոնցի «Բանբեր գրականության և արվեստի» ամսագիրը (1903 – 1904, Ս. Պետերբուրգ), խմբագրի լայնախոհ վերաբերմունքը գրական նոր հոսանքների, մասնավորապես սիմվոլիզմի նկատմամբ:

«Գեղարվեստ» ամսագրի ծնունդը (1908 – 1921, Թիֆլիս, խմբագիր՝ Գ. Լևոնյան), նրա ուշագրավ խորագրերը: Գեղեցիկի, գեղագիտական դաստիարակության, արվեստի տարբեր բնագավառների համակողմանի քննությունը ամսագրում:

«Գարուն» ավանախի հրատարակությունը Մոսկվայում 1910-1912 թթ.: Հայ գրականությունը նորովի մեկնաբանելու, քննադատության հետազոտական մեթոդները թարմացնելու միտումներ երիտասարդ քննադատների հոդվածներում (Պ. Մակինցյան, Յ. Խանգաղյան և ուրիշներ):

Հայ գրողների կոպկասյան ընկերության երեկույթները՝ նոր երևույթ արևելահայ մշակութային կյանքում: Դրանց լուսաբանումը «Հորիզոն», «Բաքվի ձայն» և այլ թերթերում:

«Հուշարար», «Թատրոն և երաժշտություն» հանդեսների ակտիվ արձագանքը դարասկզբի թատերական և երաժշտական միջոցառումներին:

ԹԵՄԱ XXIV
ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ
20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսի հրատարակությունը Փարիզում (1898 – 1947): Ամսագիրը՝ յուրօրինակ հանդիպատեղի արևելահայ և արևմտահայ գրողների համար: Երիտասարդ, տաղանդավոր բանաստեղծների (Վարուժան, Սիամանթո) հայտնությունը ամսագրի էջերում, խմբագրի նրբաճաշակ քաղաքականությունը թարգմանության ասպարեզում և այլն:

Գրական, մշակութային կյանքի աշխուժացումը երիտթուրքերի հեղաշրջումից հետո: 1910-1914 թթ. Կ. Պոլիսը՝ արևմտահայերի գրական կյանքի կենտրոն: «Գրական ասուլիսները» (1913 թ.) և դրանց դերը ժամանակի տաղանդավոր գրողների ստեղծագործության համակողմանի մեկնաբանության գործում:

Գրականության անցյալի ու ներկայի, արվեստի նորագույն ուղղությունների, արևմտահայ գրական կյանքում ի հայտ եկած նորարարական մղումների տարաբնույթ դրսևորումները «Բագին» (1911–1912), «Շանթ» (1911–1915), «Մեհյան» (1914), «Նավասարդ» (1914) պարբերականներում: Արևմտահայ երիտասարդ գրողների (Կ. Զարյան, Գ. Վարուժան, Հ. Սիրունի, Գ. Բարսեղյան) գրական հռչակագիրը «Մեհյանում», «Հայաստանեայց գրականութեան» ստեղծման գեղագիտական նոր ըմբռնումները:

ԹԵՄԱ XXV
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Հայագիտության հանդեպ հետաքրքրության մեծացումը անցյալ դարավերջին և նոր դարասկզբին: Հայ և օտարագրի գիտնականների (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Ն. Մառ, Ե. Կարստ և ուրիշներ) մասնակցությունն ազգային ինքնության, ավանդույթների, հայոց լեզվի չբացա-

հայտված շերտերը վեր հանելու գործին: Հայաստանի գավառներում և գյուղերում դեռևս պահպանվող բանահյուսական մասունքների փրկությունը անդառնալի կորստից: Նախորդ դարավերջից լույս տեսնող ամսագրերի/«Հանդես ամսօրյա» (1987– մինչև այժմ, Վիեննա), «Ազգագրական հանդես» (1896 – 1916), Շուշի, Թիֆլիս/, «Բյուրական» (1882 – 1908, Կ. Պոլիս) տպագրության աշխուժացումը 20-րդ դարասկզբին, դրանց խմբագիրների (Ա. Այտընյան, Ե. Լալայան, Ստ. Յուրյունյան) ազգանվեր գործունեությունը:

ԹԵՄԱ XXVI

ՀԱՅ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

Երգիծական թերթերի ու հանդեսների նոր հրատարակություններ: Ազգային կյանքում առկա քաղաքական սոցիալական, բարոյական ու կենցաղային արատների ծաղրն ու երգիծանքը այս պարբերականներում: Արևմտահայ իրականության մեջ առավել հայտնի երգիծական հանդեսներ՝ «Ազատ խոսք» (1901 – 1908, Փարիզ), «Կավոռ» (1908 – 1926), Կ. Պոլիս, «Խարազան» (1909, Կ. Պոլիս), «Մանանա» (1913, Կ. Պոլիս): Հ. Պարոնյանի ավանդների շարունակությունը երգիծաբանների նոր սերնդի, մասնավորապես Ե. Օտյանի ստեղծագործություններում:

Երգիծական ժանրի աշխուժացումը արևելահայ իրականության մեջ, երգիծական նոր հանդեսների/«Խաթաբալա» (1906 – 1916, Թիֆլիս), «Մոծակ» (1906, Թիֆլիս), «Զուռնա» (1906 – 1909, Թիֆլիս), «Հայելի» (1906 – 1907, Թիֆլիս) հաջող նորամուտը: Արևելահայ երգիծաբանների (Ա. Աթանասյան, Գ. Երիցյան և ուրիշներ) աշխույժ գործունեությունը երգիծական հանդեսներում և այլ պարբերականներում:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալոյան Լ.**, «Մշակի» հրապարակախոսները (19-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ), Երևան, 2014:
2. **Անանյան Գ.**, Ավետիք Արասխանյան, Երևան, 1987:
3. **Անանյան Գ.**, Հայ լրագրության առաջնեկը, Երևան, 1995:
4. **Ավետիսյան Յու.**, «Անահիտ» հանդեսը, Երևան, 1999:
5. **Բաբլոյան Մ.**, Հայ պարբերական մամուլը (մատենագիտական համահավաք ցուցակ), Երևան, 1986:
6. **Գալեմբյարյան Գր.**, Պատմություն հայ լրագրության, հատ. Ա (1794-1860), Վիեննա, 1893:
7. **Գալեմբյարյան Գր.**, Պատմություն հայ լրագրության 1860-ի սկզբներ մինչև մեր ժամանակը, «Հանդես ամսօրեայ», 1897, թիվ 2, էջ 4 և 9:
8. **Գևորգյան Լ.**, «Մուրճ» ամսագիրը, Երևան, 1982:
9. **Գևորգյան Լ.**, Գր. Արծրունին և նրա «Մշակ»-ը, Երևան 1996:
10. **Գավթյան Մ. Խ., Մանուչարյան Հ. Գ.**, Մովսես Բաղրամյան, Հայ քաղաքական հրապարակախոսության սկզբնավորումը, Երևան, 2015:
11. **Զարպիհանալյան Գ.**, Պատմություն հայերեն դպրությանց, հ. Բ., նոր մատենագիտություն, Վենետիկ, 1878:
12. **Լևոնյան Գ.**, Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության, սկզբից մինչև մեր օրերը (1799-1934), Երևան, 1934:
13. **Խառատյան Ա.**, Արևմտահայ հասարակական մտքի և մամուլի հրապարակախոսության պատմությունից, Երևան, 1980:
14. **Խառատյան Ա.**, Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1858-1960), Երևան, 1989:
15. **Խառատյան Ա.**, Հասարակական միտքը Չմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840-1900), Երևան, 1995:
16. **Խաչատրյան Լ.**, Մխիթարյանների «Բազմավեպ» հանդեսը (1843-80-ական թթ.), Երևան, 2014.

17. **Հակոբյան Մ.**, Չմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860), Երևան, 1984:
18. **Հակոբյան Մ.**, Չմյուռնահայ պարբերական մամուլը (1861-1880), Երևան, 1987:
19. «Հայ պարբերական մամուլի պատմություն», XVIII-XIX դարեր, հտ. 1, Գահիրե, 2006:
20. **Ղուկասյան Վ.**, Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Երևան, 1975:
21. **Մխիթարյան Մ.**, «Հյուսիսափայլ» ամսագիրը, Երևան, 1958:
22. **Մխիթարյան Մ.**, 19-րդ դարի 2-րդ կեսի արևելահայ մամուլի պատմությունից, («Փորձ», «Արձագանք»), Երևան, 1976:
23. **Մխիթարյան Մ.**, Արևելահայ մամուլի սկզբնավորումը և լուսավորական շարժումը (19-րդ դ. 1-ին կես), Երևան, 1994:
24. **Նազարյան Ս.**, Երևանի մամուլը, Երևան, 1986:
25. «Նիկոլ Աղբալյանի ծննդյան 130-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2006:
26. **Պետրոսյան Գ.**, Գրական բանավեճերը 20-րդ դարասկզբի հայ մամուլում, Երևան, 2007:
27. **Սողոմոնյան Գ.**, Նոր լրագրությունը Կ. Պոլսում 19-րդ դարի 80-ական թթ., Երևան, 2009:

Բովանդակություն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ	3
ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	4
ԹԵՄԱ I	
ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՆԱՎՈՐՈՒՄԸ.....	5
ԹԵՄԱ II	
ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՍԿՋԲՆԱՎՈՐՈՒՄԸ.....	5
ԹԵՄԱ III	
ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ.....	6
ԹԵՄԱ IV	
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ – ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ	7
ԹԵՄԱ V	
ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1850-1860 -ԱԿԱՆ ԹԹ.).....	8
ԹԵՄԱ VI	
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ	9
ԹԵՄԱ VII	
ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ 1850-1860- ԱԿԱՆ ԹԹ.	10
ԹԵՄԱ VIII	
ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ԱՐԵՎՍՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (1850-60-ԱԿԱՆ ԹԹ.).....	11
ԹԵՄԱ IX	
ԿՐՈՆԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ.....	12
ԹԵՄԱ X	
ՄԱՍՈՒԼԸ XIX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՅԱԿԻՆ ԲՆԱՇԽԱՐՀԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ	13
ԹԵՄԱ XI	
ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԱԶԱՏԱՄԻՏ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ.....	14
ԹԵՄԱ XII	
ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԵՎ ԱԶԱՏԱՄԻՏ ՄԱՍՈՒԼ (1880-1890-ԱԿԱՆ ԹԹ.).....	15
ԹԵՄԱ XIII	
ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1880-1890-ԱԿԱՆ ԹԹ.).....	16

ԹԵՍԱ XIV	
ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՍԱՄՈՒԼԸ (1880-1890-ԱԿԱՆ ԹԹ.).....	17
ԹԵՍԱ XV	
ՍԱՄՈՒԼԸ ԲՆԱՇԽԱՐՀՈՒՄ (1880-1900)	18
ԹԵՍԱ XVI	
ԿՐՈՆԱԿԱՆ - ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍԱՄՈՒԼ.....	19
ԹԵՍԱ XVII	
ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԵՆ ՍԱՄՈՒԼ.....	19
ԹԵՍԱ XVIII	
ԱԶԳԱՅԻՆ – ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՄՈՒԼԸ	20
ԹԵՍԱ XIX	
ՀԱՍՐԱԿԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՍԱՄՈՒԼԻ ԱՆԴՐԱԴԱՐՉԸ	21
ԹԵՍԱ XX	
ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՄՈՒԼԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՀԱՏՎԱԾՈՒՄ	22
ԹԵՍԱ XXI	
ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ ԵՎ ՍԱՄՈՒԼԸ	23
ԹԵՍԱ XXII	
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ՍԱՄՈՒԼՈՒՄ	24
ԹԵՍԱ XXIII	
ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍ	25
ԹԵՍԱ XXIV	
ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ	26
ԹԵՍԱ XXV	
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՄԲ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ	26
ԹԵՍԱ XXVI	
ՀԱՅ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՍԱՄՈՒԼԸ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻՆ.....	27
ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	28

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Մամուլի պատմության և տեսության ամբիոն

ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(18-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ)

ԾՐԱԳԻՐ

Կազմեցին՝ Ալբերտ Խառատյան, պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
Դավիթ Պետրոսյան, բ.գ.դ., պրոֆեսոր
Նաղաշ Մարտիրոսյան, բ.գ.թ., դոցենտ

Համակարգչային շարվածքը՝ Կ. Գալստյանի
Գ. Վարդանյանի
Ռ. Աբրահամյանի

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Տեխ. խմբագրումը՝ Վ. Դերձյանի

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 2:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

բ. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1



ՎՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՆՐԵՎԱՆ 2015